Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 1-ի նյութական իրավունքի բաժնի 4"9-րդ, 5"10-րդ, 9"17-րդ , 13"27-րդ , 15"31-րդ, 18"35-րդ, 22"42-րդ, 29"46-րդ, 27-52-րդ, 29"55-րդ հարցերը:

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի հավակնորդին տրվում է 1 միավոր:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի, տրվում է 1 միավոր:*

17-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում քրեական օրենսդրության դրույթների ճիշտ մեկնաբանությունից, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի վերաբերելի նախադեպային որոշումներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

27-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի վերլուծությունից, քանզի պարտական վերաբերյալ որևէ հանգամանք առկա չէ,* ուստի գնահատականը չի բարձրացվում:

31-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից: Միևնույն ժամանակ հավակնորդը Գ-ի և Դ-ի արարքները չի քննարկել կաշառք սպանալու և տալու համատեքստում, այն պայմաններում, երբ կաշառքի առարկա կարող են լինել նաև ոչ նյութական առավելությունը, այդ թվում՝ սեքսուալ բնույթի ծառայությունները, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումները խնդրում առկա պայմանների անբավարարության պարագայում ողջամիտ են և ընդունելի հանձնաժողովի համար, հետևաբար տրվում է 1 մավոր:*

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ծանր վնաս պատճառելը ավազարկության առանձնապես ծանրացնող հանգամանք է, իսկ քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններից ելնելով ծանրացնող /զենքի գործադրմամբ/ և առանձնապես ծանրացնող հանգամանքների մրցակցության պայմաններում արարքը չէր կարող որակվել ծանրացնող հանգամանքով, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները բխում է քրեական իրավունքի տեսության փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, ուստի տրվում է 1 միավոր:*

52-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները չի բխում քրեական օրենքի նորմի մեկնաբանությունից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

55-րդ հարցի *վերաբերյալ թեև հավակնորդի հիմնավորումներն առ այն, որ առկա է չհաջողված հանցակցության երկու տեսակ, ընդունելի է: Սակայն, հաշվի առնելով, որ ընտրված տարբերակը, մեջբերված իրավադրույթները և եզրահանգումները չեն համապատասխանում միմյանց, հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***1995*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 17 միավորը բարձրացնել 4 միավոր՝ արդյունքում արձանագրել 21 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

_____ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ